



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
 ՀՀ ԲՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
 ՆԱԽԱՐԱՐ
 Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

« 03 » 02 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 03

Ձեռնարկողը՝

<<ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ>> ՓԲԸ
 Բ. Երևան, Արարատյան փ. 117/1

Գործունեությունը՝

Փարաքարի գիպսափար ապարների հանքավայրի հարավային
 տեղամասում 2017-2020թթ ընթացքում կատարվելիք
 երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի
 վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
 ՀՀ Արմավիրի մարզ

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
 փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
 տնօրեն՝



Վ. Սահակյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 09

« 09 » 02 2018թ.

**ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գիպսատար ապարների հանքավայրի
հարավային տեղամասում 2017-2020թթ. ընթացքում կատարվելիք
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Պատվիրատու՝

Ներկայացված նյութեր՝

Գործունեության կատեգորիա՝

Տեղադրման վայրը՝

<<ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ>> ՓԲԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ և կից
փաստաթղթեր

«Գ»

ՀՀ Արմավիրի մարզ

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գիպսատար ապարների հանքավայրի հարավային տեղամասի աշխատանքային ծրագիրը կազմվել է "ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ" ՓԲԸ նախաձեռնությամբ և ֆինասական միջոցներով, համաձայն Մերձավանի համայնքի 16.11.2017թ. թիվ 67-Ա որոշման, Մերձավանի 4.0հա տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման համար, որոշելու գիպսատար ապարների որակաքանակական հատկանիշները, որոնք կապահովեն հումքի օգտագործումը գաջի և ցեմենտի արտադրություններում՝ որպես հավելախառնուրդ:

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գիպսատար ապարների հանքավայրի /Հարավային/ տեղամասը գտնվում է մարզի արևմտյան ծայրամասում: Այն տեղակայված է Փարաքարի գիպսատար ապարների հանքավայրից դեպի հարավ-արևմուտք շուրջ 550մ հեռավորության վրա, Մերձավանից 2.0կմ դեպի հարավ-արևմուտք, Փարաքարից 1.2կմ դեպի արևմուտք: Տեղամասը Երևան քաղաքի, Հաղթանակ, Արգավանդ և մյուս հարևան գյուղերի հետ կապված է ասֆալտապատ ճանապարհներով:

Մորֆոլոգիական տեսակետից տեղամասն իրենից ներկայացնում է ցածր բլրային տարածք և տեղադրված է 895-ից մինչև 910մ բացարձակ բարձրությունների վրա:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նախագիծը կազմված է ըստ երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծի և նախահաշիվների կազմման հրահանգի պահանջներին համապատասխան:



Հաշվի են առնված հետախուզվող տեղամասի երկրաբանական կառուցվածքը և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները:

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական հանույթ 4հա տարածքի վրա:

Աշխատանքների տեղամասը ներկայացնում է անօգտագործելի, գյուղատնտեսական աշխատանքների համար ոչ պիտանի տարածք, աղքատ բուսական ծածկույթից ու կենդանական աշխարհից:

Հետախուզումը նախատեսվում է իրականացնել հորատանցքերի միջոցով, ջրով, առանց կավային լուծույթի օգտագործման: Աշխատանքների ընթացքում չեն օգտագործվելու պայթուցիկ նյութեր: Հետախուզման նման եղանակը շրջակա միջավայրի վրա բնապահպանական տեսակետից կունենա աննշան ազդեցություն:

Տտեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ժամանակ նախատեսվում է հորատել 11 հորատանցք 220մ ընդհանուր ծավալով, չորս հետախուզական գծերի վրա: Հորատանցքերի միջին խորությունը ընդունվում է 200մ:

Հորատանցքերը միմյանց կապակցված չեն և դրանց տեղը և խորությունը կարող են փոխվել երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ժամանակ, եթե դրա անհրաժեշտությունն առաջանա:

Հորատումը կատարվելու է ՈՒԳԲ- 2.5Ա մակնիշի հաստոցով 132մմ սկզբնական և 112մմ վերջնական տրամագծի թագիկներով: Հանուկի միջին ելքը գիպսատար ապարներում պետք է գերազանցի 80%-ը:

Նախագծով նախատեսվում է հորատել 11 հորատանցք, որի համար 116 անգամ կկատարվի ՈՒԳԲ-2.5Ա ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները, հորատահանուկը, բնական մերկացումները:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Փաստագրման աշխատանքների ընդհանուր ծավալը կկազմի՝

- Հորատանցքեր - 220գծ.մ
- Մերկացումներ - 25գծ.մ
- Ընդամենը - 245գծ.մ

Գիպսատար ապարների ծավալային զանգվածը նախատեսվում է որոշել դաշտային պայմաններում՝ հայտնի ծավալից հանված ապարի կշռման եղանակով: Նախատեսվում է վերցնել 10 տեխնոլոգիական նմուշ, ընդհանուր 1500տ. քաշով:

Տեղամասի օգտակար հանածոյի որակական հատկանիշները պարզաբանելու համար նախատեսվում է հորատանցքերից և մերկացումներից կատարել նմուշարկում:

Հորատանցքերում նմուշարկումը կկատարվի հորատահանուկից, անընդմեջ գծով, շերտախմբի ամբողջ հզորությամբ: Միջին հզորությամբ շերտերը, անկախ գիպսի պարունակությունից կնմուշարկվեն առանձին, իրենց լրիվ հզորությամբ, իսկ փոքրերը՝ ներփակող ապարների հետ միասին, քանի որ գործնականում անհնար է տարբեր որակի շերտերի, որպես ինքնուրույն միավորների շահագործումը: Նույն սկզբունքով ակոսային եղանակով կնմուշարկվեն մերկացումները:



Հորատանցքերում օգտակար հանածոյի նմուշարկումն իրականացվելու է հիմնականում 2.15-3.5մ երկարությամբ հանուկային նմուշներով: Մակրոսկոպիկ անփոփոխ առանձին միջակայքերում նմուշների երկարությունը հնարավոր է հասցվի մինչև 4.5-5.0մ: Ընդամենը կվերցվի 73 հանուկային նմուշ: Մերկացումներից նախատեսվում է վերցնել մենաքարային 10 նմուշ:

Քիմիական անալիզների համար ընդամենը նախատեսվում է վերցնել 73 շարքային հորատահանուկային և 10 մենաքարային նմուշ, որոնք անալիզի կենթարկվեն /Գաջ/ ՓԲԸ-ի գործարանի լաբորատորիայում: Քիմիական անալիզների հուսալիությունը պարզելու նպատակով նմուշների կրկնօրինակներից 15-ը կենթարկվեն արտաքին վերստուգման՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության /Անալիտիկ/ ՓԲԸ-ի լաբորատորիայում:

Ապարի ֆիզիկամեխանիկական հատկանիշները բնական պայմաններում թրծելուց հետո պարզաբանելու համար շարքային նմուշների կրկնօրինակներից անհրաժեշտ է կազմել 5 խմբակային նմուշ, յուրաքանչյուր 15կգ և վերցնել 15 համախառնը նմուշ:

Մինչև նախագծային փաստաթղթերի կազմելը պետք է ծանոթանալ ֆոնդային և հրատարակված նյութերին, գործող հրահանգներին և ԳՈՍՏ-րին, ինչպես նաև կատարել երկրաբանական որոնողական աշխատանքներ, առանձնացնելով հետախուզման համար տարածքներ:

Նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտության դեպքում կկատարվի վերոհիշյալ տոպոգրաֆիական հիմքի ճշգրտում, բոլոր հետախուզական փորվածքների և երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ, որի հիմքի վրա կկազմվի տեղամասի երկրաբանական քարտեզը:

Հետախուզվող տեղամասի ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ նախատեսվում է կատարել համապատասխան ուսումնասիրություններ և դիտարկումներ:

Հաշվի առնելով տեղամասի հարթ ռելիեֆը հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում: Կկատարվի ամբողջ փաստացի նյութի ընդհանրացումը և համակարգումը, երկրաբանական հաշվետվության կազմումն իր համապատասխան ներդիր քարտեզներով, հատակագծերով, կտրվածքներով և պաշարների գնահատմամբ:

Հորատման ժամանակ կօգտագործվեն նախկինում կառուցված ճանապարհները՝ դրանք նորոգելով:

Հետախուզվող տարածքում ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանման նպատակով նախատեսվում են կատարել համապատասխան դիտարկումներ:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել հանքավայրի ապարների զանգվածների առանձնահատկությունները, դրանց անիզոտրոպիան, ապարների կազմը, դրանց ճեղքավորվածությունը, ապարների կազմվածքային յուրահատկությունները և այլն:



Անցած լեռնային փորվածքները, հանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Տարածքի ուսումնասիրության ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով անհրաժեշտ է օգտագործվող տեխնիկական շահագործել սարքին վիճակում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Տարածքում երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են հորատանցքերի հորատմամբ, մակերեսային լեռնային փորվածքների, հետախուզաառուների և հետախուզահորերի անցմամբ:

Այդ աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրը աղտոտվածությունից զերծ պահելու նպատակով նախատեսվում է կիրառել բնապահպանական հետևյալ միջոցառումները.

- պարբերաբար հսկել մթնոլորտային օդի մաքրությունը հորատման հրապարակներում, ավտոճանապարհների վրա, նկատի ունենալով, որ օդում փոշու սանիտարական նորման չպետք է գերազանցի 0.004գ փոշի օդի 1մ³-ում,
- փոշեզրկման նպատակով աշխատանքային գոտիներում պարբերաբար կատարել ջրցանում,
- օգտագործվող ագրեգատներն աշխատեցնել սարքին վիճակում վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու համար:

Ինչպես նաև հորատող մեքենայի աշխատանքի ժամանակ նախատեսվում է վնասակար նյութերի արտանետումների քանակը փոքրացնելու համար սարքավորումների վրա վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների տեղադրում: Ինչպես նաև հետևել, որպեսզի մեխանիզմի աշխատանքի ժամանակ վառելիքի և քսայուղերի արտահոսք տեղի չունենա:

Նախատեսվում է որպես հորատման սպասարկող ճանապարհներ օգտագործել գոյություն ունեցող գրունտային ճանապարհները՝ վերջիններս բարեկարգելով:

Ջրային ավազանի կեղտոտում տեղի չի ունենա, քանի որ ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է փորձնական հանույթի ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, ծածկել հողաշերտով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է հորատահարթակների տարածքի մակերեսից: Հողաբուսածածկի շերտը վերականգնվում է 0.3մ խորության վրա: Վերականգնման ծավալը կկազմի 462մ³:

Վերականգնումը իրականացվելու է ձեռքով: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման համար ընկերության կողմից նախատեսվում է 332640դրամ:



Այսպիսով երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են ՀՀ բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում նախագիծը լրամշակվել է և հաշվի է առնվել արված դիտողություններն ու առաջարկությունները:

Փորձաքննական պահանջներ

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտի փաստաթղթերում ամրագրված բնապահպանական միջոցառումների և սոցալ-տնտեսական ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական բոլոր նորմերը:

3. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինադրի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Երկրաբանահետախուզական աշխատանքների, ինչպես նաև նախատեսված միջոցառումների ժամանակացույցը համապատասխանեցնել աշխատանքների իրականացման ժամանակահատվածին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«ԱԱՀԱԿՅԱՆՇԻՆ» ՓԲԸ կողմից ներկայացված ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի գիպսատար ապարների հանքավայրի հարավային տեղամասում 2017-2020թթ կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:



Մասնագետ

Հ. Մեսրոպյան